

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ԿԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՆՆԵՐԻՆԵՐԸ
ԼՂՀ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ
ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ (1992-2002թթ.)***

Արպատ Ավանեայան, Գրիգորի Հարությունյան

Բանալի բառեր` դպրոցական գործ, ռազմավարական ծրագրեր, տնտեսական ձգնաժամ, ֆինանսական միջոցների սղություն, նորմատիվային իրավական դաշտ, օրինակելի կանոնադրություն, համայնքի գույքի ցանկ:

Հայոց պետականության հզորացման գործում դպրոցն առանձնահատուկ նշանակություն ունի: Այդ է պատճառը, որ ԼՂՀ կազմավորումից անմիջապես հետո այս կրթական համակարգը և հատկապես դպրոցական գործը գտնվել է նորաստեղծ հանրապետության իշխանությունների ռազմավարական ծրագրերում: Բնականաբար, Արցախյան պատերազմի տարիներին և դրան անմիջական հաջորդած հետպատերազմյան ժամանակաշրջանում կրթական համակարգի զարգացման ծրագրերը հնարավոր չէր սպասվող արդյունավետությամբ իրականացնել: Գուցե թե դրանով պիտի բացատրել նաև համակարգում որոշ ժամանակահատվածով այսպես կոչված առաջընթացի դուրսը, հատկապես հանրապետության ստեղծման առաջին տարիներին: Մեր կարծիքով` համակարգի վրա բացասական առումով շոշափելի ազդեցություն է թողել թե՛ դպրոցներից տղամարդ ուսուցիչների հեռանալը, թե՛ սոցիալական կացության և թե՛ դպրոցաշինության անմխիթար վիճակը(1992-1995թթ.): Այստեղ անհրաժեշտ ենք համարում նաև մատնանշել այն հիմնական գործոնները, որոնք քննարկվող ժամանակաշրջանում(1992-2002թթ.) բացասական ազդեցություն են ունեցել Արցախի կրթական համակարգի վրա: Առանձնացնենք երեքը, որոնք համընդհանուր բնույթ են կրում և, ընդհանուր առմամբ, վերաբերում են նաև Հայաստանի Հանրապետությանը: Առաջին` տնտեսական ձգնաժամային իրավիճակով պայմանավորված ֆինանսական միջոցների սղությունը, երկրորդ` սոցիալ-տնտեսական անկայունությունը, երրորդ` թերի նորմատիվային իրավական դաշտի առկայությունը, հաճախ մի շարք օրենսդրական նորմերի բացակայությունը և, ինչու չէ, գոյություն ունեցողների անտեսումը, հանրակրթական դպրոցների կառավարման մեջ անձշտության առաջացումը:

Առկա փաստագրական նյութերի ուսումնասիրության հիման վրա այժմ վերլուծաբար ներկայացնենք վերոնշյալ բացասական գործոնների հաղթահարման ուղիները, միաժամանակ փորձենք բնութագրել ուսումնասիրվող ժամանակաշրջանում ԼՂՀ-ում հասարակական և սոցիալ տնտեսական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց բարեփոխումների իրականացումը կրթության համակարգում: Հանրահայտ ճշմարտություն է, որ կրթական համակարգը միշտ էլ արտացոլել է այն փոփոխությունները, որոնք կատարվում են հասարակական կյանքում և կոչված են բավարարելու նրա պահանջները:

Հայտնի է, որ Հայաստանում կրթության համակարգի վերափոխումների գործընթացն սկսվել է 1990 թվականից, իսկ Արցախում ավելի ուշ` հետպատերազմյան ժամանակաշրջանում: Պատերազմական տարիներին Լեռնային Ղարաբաղում ամբողջ-

* Հոդվածն ընդունվել է 09.01.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

վին ավերվել է շուրջ 110 դպրոցական շենք, որոնց մի զգալի մասի գործունեությունը դադարեցվել է սկսած 1992 թվականից: Ըստ ԼՂՀ վիճակագրական տեղեկագրի տվյալների՝ հանրապետությունում այդ տարի աշակերտների թիվը կազմում էր 23064[1]: Փաստորեն խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղում ստեղծված կրթական համակարգի գործունեությունը պատերազմի հետևանքով խիստ թուլացել էր: Միաժամանակ լրջորեն տուժել են նաև նախադպրոցական հիմնարկները, որոնց գործունեությունը իրավիճակի վտանգավորության պատճառով դադարեցվել է:

Հետպատերազմյան շրջանում ԼՂՀ հանրակրթական բնագավառում նշանակալի դեր ունեցավ 1996թ. ՀՀ Կառավարության կողմից ՀՀ պետական հանրակրթական հաստատության օրինակելի կանոնադրության հաստատումը (ԼՂՀ-ում նման կանոնադրություն հաստատվեց ավելի ուշ՝ 1999թ.): Հայաստանի Հանրապետության դպրոցներն աշխատում էին ժամանակավոր կանոնադրության համաձայն: Որոշ դպրոցների գործունեությունը կասեցվեց կանոնադրությամբ[2]: Համաձայն կանոնադրության՝ առաջին անգամ իրական ինքնավարություն տրվեց հատկապես ուսուցման մեթոդների ընտրության, տարբերակված, հոսքային դասարաններ բացելու և կադրային համալրման հարցերում:

Շատ չանցած՝ 1997թ., ԼՂՀ Կառավարության որոշմամբ փոփոխություն կատարվեց նաև Լեռնային Ղարաբաղի դպրոցական օրինակելի կանոնադրության մեջ: Այսպես՝ 1998թ. նոյեմբերի 10-ին ԼՂՀ Կառավարությունը ընդունեց «Համայնքի սեփականության գույքի ցանկը հաստատելու մասին» որոշումը[3], որի համաձայն՝ հանրապետության պետական հանրակրթական հաստատություններն ընդգրկվեցին համայնքի սեփականության գույքի ցանկում: Դրանից հետո շրջվարչակազմի կրթության բաժինները ցած դրեցին իրենց լիազորությունները, որը խիստ բացասական հետևանք թողեց դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության վրա: Ստացվել է այնպես, որ հանրապետության մի շարք գյուղական համայնքների ղեկավարներ էին նշանակվել միջնակարգ, կամ նույնիսկ թերի միջնակարգ կրթությամբ անձինք, իսկ այդ կարգի կրթությամբ գյուղապետերը չէին կարող հսկել կրթական օջախների բնականոն աշխատանքները, ոչ էլ մասնագետներ ունեին, ովքեր կարող էին այն իրականացնել: Այսպիսի որոշման հանդես գալը կապված էր նորաստեղծ հանրապետության կրթության պատասխանատուների մեղմ ասած, անտեղյակությամբ կամ քիչ տեղյակությամբ կրթության կազմակերպման և իրականացման լուրջ նրբություններին:

Անկասկած պետք է արձանագրել, որ այդ որոշման ընդունման պատասխանատուների նպատակը կրթության գոյություն ունեցող համակարգի լիովին կամ մասնակի քայքայումը չէր, այլ առկա համակարգը առավել արդյունավետ համակարգով փոխարինելը: Ցավոք, միշտ չէ, որ առաջ քաշված նպատակին ուղղված քայլերը լինում են բավարար՝ լիարժեք արդյունքի հասնելու համար:

Վերոնշյալ որոշման նպատակն էր իրականացնել կազմակերպական մի շարք քայլեր.

- ապահովել պետական հանրակրթական հաստատությունների համակարգի կառավարման հետագա ապակենտրոնացումը,
- խթանել դպրոցի կառավարման գործում համայնքի մասնակցությունն ու օժանդակությունը,
- բարձրացնել դպրոցի կողմից բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը,
- նախադրյալներ ստեղծել արտաբյուջետային միջոցների ներգրավման համար,

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

- ապահովել ներդպրոցական կառավարման ժողովրդավարացումը և անցում խորհուրդների միջոցով կառավարմանը և այլն:

ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստում(1999թ. հոկտեմբերի 26-ին), որին ներկա էին նաև դպրոցների տնօրենները, շրջվարչակազմի ղեկավարները, ԼՂՀ Ազգային ժողովի կրթության և գիտության հանձնաժողովի անդամները, կառավարության պատասխանատու աշխատողներ, հանգամանորեն քննարկեցին նշված որոշման դրույթները և հարց դրեցին վերացնելու այդ թյուրիմացությունը և դպրոցները, նախադպրոցական հաստատությունները հանելու գյուղապետարանների ենթակայությունից: Հիմք ընդունելով ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեգիայի նիստում արված առաջարկությունները՝ 1999թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ Կառավարությունն ընդունեց որոշում[4] (թիվ 228), որի համաձայն՝ հանրապետությունում գյուղական դպրոցները, մանկապարտեզները հանվեցին գյուղական համայնքների սեփականության գույքի ցուցակից և հանձնվեցին շրջանային կրթության բաժինների ենթակայությանը՝ վերականգնելով նախկին կարգավիճակը:

ԼՂՀ Կառավարության մեկ այլ որոշմամբ հաստատվել է կրթական համակարգի բարեփոխումների ծրագիր և ժամանակացույց, ինչպես նաև, ըստ աշակերտների թվաքանակի, ֆինանսավորման կարգը: Տվյալ որոշմամբ ընդլայնվեց բարեփոխումների ծրագրում ընդգրկված դպրոցականների ցանկը: Ըստ ԼՂՀ վիճակագրական տարեգրքի տվյալների՝ 1999-2000 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 212 դպրոց, դրանցում սովորողներ՝ 23468, դասավանդող ուսուցիչներ՝ 3759[5]: Հանրակրթական դպրոցի զարգացման համար բազային նշանակության այս ծրագիրը մշակված էր հանրակրթության բարեփոխումների ռազմավարությանը համապատասխան և նախատեսված էր 1999-2000թթ. համար:

Հարկ է նշել, որ կրթական համակարգի այդ շրջափուլը(1999-2000թթ.) կարելի է շրջադարձային համարել: Չենք կարող ժխտել, որ գոնե վերջին երեք տարում կրթական համակարգը որոշակի առաջընթաց է ապրել, կառուցվել կամ վերակառուցվել են տասնյակ դպրոցներ, նկատելիորեն հարստացել է կրթօջախների նյութատեխնիկական բազան, բարելավվել է դպրոցների տարեկան բյուջետային ֆինանսավորման չափը, որոշվել ըստ աշակերտների քանակի, հարստացել է կրթօջախների նյութատեխնիկական բազան, բարենպաստ պայմաններ ստեղծվել նրա գործունեության լավագույն ցուցանիշներ ձեռք բերելու համար, որոշակի քայլեր են արվել նաև ուսուցիչների սոցիալական դրության բարելավման ուղղությամբ: Պետությունը տարեցտարի ավելի մեծ ուշադրություն է դարձնում ուսուցչի նյութական և բարոյական խրախուսման ձևերին:

ԼՂՀ-ում կրթական գործի բարելավման տեսակետից էական նշանակություն ունեցավ 2000թ. ապրիլի 4-ին ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Կրթության մասին» օրենքը[6], որի մեջ հետազայում, մինչև 2008թ., կատարվեցին մի շարք լրացումներ և փոփոխություններ: Այդ օրենքով հանրապետությունում կրթական համակարգը դրվեց նոր հիմքի վրա: Հաստատվեցին կրթության մակարդակները, չափորոշիչները, որի կիրառումը կապահովի հանրակրթության որակի վերահսկումը և նրա պատշաճ մակարդակի ապահովումը: «Կրթության մասին» օրենքը դարձավ կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմք: Օրենքը նպաստեց հանրապետությունում դպրոցի բարեփոխման գործընթացին և կրթության որակի բարձրացմանը: Համաձայն օրենքի դրույթների՝ մշակվեց նաև կրթության համակարգի պահպանման և զարգացման 2001-2005թթ. ծրագիրը[7], որի հիմնական դրույթներն են.

- կրթության համակարգի ֆինանսավորում,
- կրթության համակարգի կանոնակարգում,

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

- հատուկ-ընդհանուր կրթության իրականացում՝ հանրակրթական և հատուկ ծրագրերով,
- կրթության համակարգի կադրային ապահովվածություն,
- նախնական մասնագիտական(արհեստագործական) կրթության որակի բարձրացում,
- կրթության համակարգում բարեփոխումների իրականացում և այլն:

Նպատակահարմար ենք գտնում այստեղ ներկայացնել նաև նախկին և ուսումնափորձող ժամանակաշրջանի կրթության համակարգում կատարված փոփոխությունների համեմատական վերլուծությունը:

Հայտնի է, որ կրթության նախկին համակարգում ուսման տևողությունը կազմում էր տասը տարի: Նախատեսվում էր փոփոխություն կատարել միջնակարգ կրթության 10-ամյա ժամկետի մեջ: Հետպատերազմյան Հայաստանում և Արցախում, մի շարք նկատառումներից ելնելով, անհրաժեշտություն առաջացավ(1999 թվականից սկսած) անցնելու միջնակարգ՝ 11-ամյա կրթության: Այս գործընթացն է իրականացվում Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսիայում: Մերծբայության երկրները վաղուց են անցել միջնակարգ 12-ամյա կրթության: Եվրոպական երկրներում ընդհանրապես համատարած 11-12-ամյա միջնակարգ կրթությամբ էր իրականացվում ուսուցումը: Հայաստանում այդ համակարգին անցման անհրաժեշտությունը պայմանավորված էր ոչ միայն միջազգային ինտեգրացմամբ (դիպլոմների, ատեստատների փոխադարձ ճանաչելու առումով), այլ նաև կրթության բովանդակության տրամաբանությամբ: Նախատեսվում էր Հայաստանում, Արցախում ուսուցման առաջարկվող տարբերակին անցնել 2001-2002 ուսումնական տարում: Լրացուցիչ մեկ տարին անհրաժեշտ է ավագ դպրոցում (8-10-րդ դասարանները նկատի ունենք նշված ժամանակաշրջանը) հիմնարար առարկաներն աշակերտներին լիարժեք ներկայացնելու, ժամանակակից պահանջներին համահունչ նոր առարկաներ ներմուծելու համար: Հետագայում հանրակրթության պետական համակարգը, որը սկսել է գործել 2006-2007 ուսումնական տարվանից, ապահովում է 12-ամյա ուսուցումը: Հանրապետությունում առկա է 9-ամյա պարտադիր կրթությունը, իսկ ինչպես հայտնի է, 2014-2015 ուսումնական տարում քննարկվում էր 12-ամյա կրթությունը ևս դարձնել պարտադիր: Սա նշանակում էր, որ ուսման մեջ սովորողների հետ մնալու հարցը չի կարող ինքնահոսի մատնվել և հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է հասկանա, որ կրթությունը կամ սովորելը անձնական գործ չէ, այն բխում է հասարակության շահերից և ցանկացած երկրի համար պետական անվտանգության և առաջընթացի խնդիր է:

Ինչպես արդեն նշել ենք, հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների բնականոն կազմակերպման պայմաններից մեկը հարմարավետ դպրոցական շենքի, գույքի, նյութատեխնիկական բազայի առկայությունն է, որը տարեցտարի կայանում է: Հայտնի է, որ պատերազմական գործողությունները դադարեցվելուց հետո (1994թ. ապրիլին) սկսեցին վերականգվել դպրոցական շենքերը: Սակայն այդ գործընթացը բավականին դանդաղ էր ընթանում նախ պետական միջոցների, ապա՝ մասնավորների ներդրումների բավարար չլինելու պատճառով: 2002թ. մայիսի վերջին Երևանում տեղի ունեցած «Հայաստան-Սփյուռք» համահայկական երկրորդ ժողովը հաստատեց առաջիկա երեք տարում Արցախի հանրապետությունում դպրոցների հիմնանորոգման համայնի ծրագիր: Դրանից հետո միայն աշխուժացան դպրոցների նյութատեխնիկական բազան համայնելու աշխատանքները, ընդլայնվեց նաև դպրոցական ցանցը: Ըստ վիճակագրական տվյալների՝ 2002-2003 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր 224 դպրոց, որոնցում սովորում էին 23878 աշակերտներ, դա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

սավանդում 3098 ուսուցիչներ[8]: Ըստ շրջանային կրթության բաժնի արխիվային տվյալների՝ դպրոցականների մոտավորապես 68 տոկոսը սովորում է հիմնանորոգված և նորակառույց, սանիտարահիգիենիկ նորմալ վիճակում գտնվող կրթօջախներում:

Հանրակրթական դպրոցներում ավանդույթ է դարձել համագործակցության ծրագրերի շրջանակներում սերտ կապերի հաստատումը շրջանի և ՀՀ կրթական հաստատությունների հետ. կազմակերպվում են փոխադարձ այցելություններ, դասախոսներ, մանկավարժական ընթերցումներ, առաջավոր փորձի փոխանակում և այլ հետաքրքիր միջոցառումներ: Համագործակցության շրջանակների ընդլայնմանն է միտված մեր բարերարների աջակցությունը:

Առանց երկմտելու՝ կարելի է ասել, որ նախկինում և մեր ժամանակներում եղած ցանկացած լավ ավանդույթի վերականգնումն այսօր համարվում է հաջողություն: Վստահ կարող ենք ասել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետությունում գործնական քայլեր են արվել ինչպես տնտեսական, այնպես էլ կրթական համակարգը տեղից շարժելու ուղղությամբ: Նոր ժամանակներում, բնականաբար, նոր մոտեցումներ են պահանջվում, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է կրթօջախների արդիականացմանը:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ դպրոցական կրթությունը եղել և մնում է բազային օղակ, հիմք, որի վրա պետք է կառուցվի հետագա կրթության ողջ համակարգը: Այստեղ հապճեպությունն ու սխալ որոշումները կարող են անշտկելի հետևանքներ թողնել՝ կաթվածահար անելով կրթական օջախները, խաղիլելով անգամ պետական հիմքերը: Ուրեմն անհրաժեշտ է պահպանել նախկին կրթական համակարգի լավագույն ավանդույթներն ու ձեռքբերումները և միաժամանակ նախադրյալներ ստեղծել նրա հետագա զարգացումն ապահովելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 1995-1996թթ., էջ 45:
2. Տե՛ս Լ.Ասատրյան և ուրիշներ, կրթության համակարգի կառավարման հիմունքներ, մաս 1, Եր., 2003, էջ 31:
3. Տե՛ս ԼՂՀ կառավարության որոշում թիվ 227, 10.11.1998թ.:
4. ԼՂՀ կառավարության որոշում թիվ 228, 10.12.1999թ.:
5. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2006թթ., էջ 45-53:
6. ԼՂՀ գործող օրենքների ժողովածու(1994-2001թթ.), էջ 735-749:
7. Այդ մասին մանրամասն տես կրթության համակարգի զարգացման 2001-2005թթ. ծրագիրը, 31 հուլիսի, 2001թ.:
8. Տե՛ս Հ.Աբրահամյան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը (2000-2008թթ.), Եր., 2013, էջ 250:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կրթության համակարգի վիճակը և հիմնախնդիրները
ԼՂՀ կազմավորման առաջին տասնամյակում(1992-2002թթ.)
Արպատ Ավանեսյան, Գրիգորի Հարությունյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորումից հետո կրթական համակարգը և հատկապես հանրակրթության ոլորտը գտնվել է հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում և ընդգրկվել է ռազմավարական ծրագրերում: Քննարկվող ժամանակաշրջանում մի շարք գործոններ բացասական ազդեցություն են թողել Արցախի կրթական համակարգի վրա: Այդ գործոններից առանձնացվում են հետևյալ երեքը՝ ֆինանսական միջոցների սղությունը, սոցիալ տնտեսական անկայությունը և նորմատիվային իրավական դաշտի անկատարությունը:

Պահանջվում էր ձեռնամուխ լինել կրթության համակարգի վերափոխմանը՝ այն դարձնելով համահունչ ստեղծված նոր իրողություններին: Հայաստանի Հանրապետությունում կրթության համակարգի վերափոխումների գործընթացն սկսվեց 1992թ., իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում:

РЕЗЮМЕ

**Проблемы системы образования и ее состояние в первом десятилетии формирования
Нагорно-Карабахской Республики (1992–2002)
Арпат Аванесян, Григорий Арутюнян**

Ключевые слова: школьное дело, стратегические программы, экономический кризис, отсутствие финансовых средств, нормативно-правовая база, типовые уставы, список коммунальной собственности

После формирования Нагорно-Карабахской Республики система образования, в частности, общее образование, была в центре внимания властей республики и вовлечена в стратегические программы. В указанный период ряд факторов, в особенности нехватка финансовых ресурсов, социально-экономическая независимость и несовершенство законодательной сферы, оказало негативное влияние на систему образования в Арцахе.

Было необходимо предпринять меры для реформирования системы образования, которая должна соответствовать новым обстоятельствам. Реформирование системы образования в Республике Армения началось в 1992 году, а в Нагорно-Карабахской Республике – в послевоенный период.

SUMMARY

The Problems of Educational system and its state in the first decade of the Nagorno-Karabakh Republic Formation (1992-2002)
Arpat Avanesyan, Grigory Harutyunyan

Keywords: *schooling, strategic programs, economic crisis, the lack of financial means, legal framework, model statutes, the list of municipal property.*

After the formation of the Nagorno-Karabakh Republic the education system and in particular general education has been the focus of authorities of the Republic and has been involved in strategic programmes. In the aforementioned period a number of factors such as the scarcity of financial resources, social-economic independence and imperfection of normative legal framework had a negative impact on the education system of Artsakh.

Certain reforms of education system should have taken place, making it in compliance with new circumstances. In the Republic of Armenia the reformation process of education system launched in 1992, and in the Nagorno-Karabakh Republic - in the postwar period.